

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ



Մարզկենտրոնը՝

ք. Գյումրի

Տարածաշրջանները՝

Արթիկ
Ախուրյան
Անի
Ամասիա
Աշոցք

Քաղաքները՝

Գյումրի
Արթիկ
Մարալիկ

Տարածքը	2 680 քառ.կմ
Հայաստանի Հանրապետության տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը, %	9.0
Համայնքներ, 2020 թ. տարեակգրի դրությամբ	42
Քաղաքներ	3
Գյուղեր	127
Բնակչության թվաքանակը 2020թ. տարեակգրի դրությամբ	231.4 հազ.մարդ
<i>այդ թվում՝</i>	
քաղաքային	135.6 հազ. մարդ
գյուղական	95.8 հազ.մարդ
Հայաստանի Հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2019 թ., %	7.8
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2019 թ., %	58.6
Գյուղատնտեսական նշանակության հողեր	210 876.8 հա
այդ թվում՝ վարելահողեր	78 143.0 հա

Շիրակի մարզը գտնվում է հանրապետության հյուսիս-արևմուտքում՝ ք. Գյումրի մարզկենտրոնով:

Պետական սահմանով արևմուտքից սահմանակից է Թուրքիային, հյուսիսից՝ Վրաստանին, արևելքից սահմանակից է Լոռու մարզին և հարավից՝ Արագածոտնի մարզին:

Շիրակի մարզը, լինելով ծովի մակերևույթից մոտ 1 500-2 000 մ բարձրության վրա (մարզի 52 գյուղեր գտնվում են ծովի մակերևույթից մոտ 1 500-1 700 մ, իսկ 55-ը՝ 2 000 մ բարձրության վրա), հանդիսանում է Հայաստանի ամենացրտաշունչ տարածաշրջանը, որտեղ ձմռանը օդի ջերմաստիճանը երբեմն հասնում է -46°C-ի:

Մարզի տարածքով են անցնում Հայաստանը Վրաստանին կապող գլխավոր երկաթգիծը և ավտոմոբիլային խճուղին: Այստեղ իրար են միանում Հայաստանի և Թուրքիայի երկաթուղային և ավտոճանապարհային ցանցերը:

Սևանա լճից հետո մեծությամբ երկրորդ ջրային ավազանը և մարզի միակ լիճը Արփին է, որն ունի ծովի մակերևույթից ավելի քան 2 000 մ բարձրություն: Լճից սկիզբ է առնում Արաքս գետի ձախակողմյան վտակ՝ Թուրքիայի հետ սահմանային, Ախուրյան գետը:

Ախուրյան գետի վրա գործում է Ախուրյանի ջրամբարը, որն իր 526 մլն. մ³ ծավալով խոշորագույնն է հանրապետությունում:

Ախուրյան գետի վրա գործում են 8 ՀԷԿ-ներ: Մարզի տարածքում է գտնվում նաև Մանթաշի ջրամբարը:

Ջավախք-Շիրակ բարձրավանդակի կենսաբազմազանության պահպանման համար մարզում գործում է «Արփի լիճ» ազգային պարկը:

Շիրակի մարզի արդյունաբերության առաջատար ճյուղերն են սննդամթերքի և խմիչքների և ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը: Հայտնի են Արթիկի, Անիի տուֆն ու պեմզան:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրակա-նացվում են ավտոմոբիլային տրանսպորտով (մարզում գործում է օդանավակայան, որն ապահովում է օդային կապ արտաքին աշխարհի հետ):

2019թ.-ին մարզի տնտեսության հիմնական հատ-վածների տեսակարար կշիռները Հայաստանի Հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 3.3%,
- գյուղատնտեսություն՝ 10.4%,
- շինարարություն՝ 6.3%,
- մանրածախ առևտուր՝ 3.9%,
- ծառայություններ՝ 1.6%:

Մարզկենտրոն Գյումրի քաղաքը (2020թ. տարեկզբին 112.4 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 118 կմ հեռավորության վրա, բարձրությունը ծովի մակերևույթից շուրջ 1 550 մ է:

Քաղաքը գտնվում է Ախուրյան գետի ձախ ափին: Այն բնակչության թվաքանակով և իր նշանակությամբ շարունակում է համարվել Հայաստանի Հանրապետության երկրորդ քաղաքը:

Գյումրին միշտ եղել է արվեստի և մշակույթի քաղաք: 1912թ. առաջին անգամ Գյումրիում է բեմադրվել Ա.Տիգրանյանի «Անուշ» օպերան և դրվել ազգային օպերային թատրոնի հիմքը, 1935թ. հիմնադրվել է տիկնիկային թատրոնը՝ առաջին մանկական թատրոնը Հայաստանում:

1920թ. հունվարին Գյումրի քաղաքում բացվել է առաջին համալսարանը Հայաստանում:

1988թ. ավերիչ երկրաշարժից 30 տարի անց վերականգնվող Գյումրին շարունակում է մնալ Հայաստանի Հանրապետության մշակութային կարևոր օջախներից մեկը, իսկ «Կոմայրի» արգելոց-թանգարանը յուրօրինակ խթան է զբոսաշրջության զարգացման համար:

Քաղաքում զարգացած է մշակող արդյունաբերությունը:

Արթիկ քաղաքը (2020թ. տարեկզբին՝ 17.8 հազ. բնակիչ, Երևանից 100 կմ հեռավորության վրա) գտնվում է Արագած լեռնազանգվածի հյուսիս-արևմտյան լանջին, բարձրությունը ծովի մակերևույթից 1 760 մ է: Քաղաքով անցնում են Մարալիկ-Գյումրի երկաթգիծը և Ապարան-Գյումրի խճուղին:

Քաղաքի արդյունաբերական արտադրանքի հզորության հենարաններն են սննդի, ապակյա կաղապարների, մեքենասարքավորանքների և հատուկ նշանակության սարքերի արտադրությունը:

Մարալիկ քաղաքը (2020թ. տարեկզբին՝ 5.4 հազ. մարդ, Երևանից 90 կմ հեռավորության վրա) գտնվում է Արագած լեռնազանգվածի արևմտյան լանջին, բարձրությունը ծովի մակերևույթից 1 920 մ է: Քաղաքով է անցնում Գյումրի-Թալին-Երևան մայրուղին:

Քաղաքում զարգացած են տեքստիլ արդյունաբերությունը, շինանյութերի արդյունահանումը և գյուղատնտեսությունը


ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԵՌԱՏԱՐԻՔԱՅԻՆ ԲՈՒՐԳԸ,
2020թ. հունվարի 1-ի դրությամբ

տղամարդ -107 283

տարիք

կին -124 082

%



ՄԱՆՐԱԾԱՆ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ

	Քանակը				
	2015	2016	2017	2018	2019
Մանրածախ առևտրի օբյեկտներ, ընդամենը	1 247	1 196	1 207	1 207	1 280
<i>այդ թվում՝</i>					
խանութներ	841	910	939	945	1 044
կրպակներ	329	212	190	182	154
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	2	2	2	2	2
սպառողական ապրանքների շուկաներ	5	3	3	3	4
առևտրի այլ օբյեկտներ	70	69	73	75	76

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	Քանակը				
	2015	2016	2017	2018	2019
Պետական նախադպրոցական	51	50	101	114	115
Պետական հանրակրթական	167	165	162	161	159
Ոչ պետական հանրակրթական	5	4	5	5	4
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	28	28	27	30	30
Պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական ¹	5	5	6	6	6
Պետական միջին մասնագիտական ուսումնական	9	9	9	9	9
Ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական	3	3	2	2	2
Պետական բարձրագույն ուսումնական	1	1	1	1	1
Պետական բարձրագույն ուսումնական հաստատության մասնաճյուղ	5	5	5	5	5
Ոչ պետական բարձրագույն ուսումնական	2	2	2	2	2

ՔԱՂԱՔՆԵՐ

Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ ²
Գյումրի	112 412
Արթիկ	17 750
Մարայիկ	5 408

¹Ներառյալ այն միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, որոնք իրականացնում են նախնական (արհեստագործական) ծրագիր:

² Հայաստանի Հանրապետության քաղաքների բնակչության թվաքանակը ներկայացված է Հայաստանի Հանրապետության 2011թ. մարդահամարի հիմքով վարվող բնակչության ընթացիկ հաշվառմամբ:

ԳՅՈՒՂԵՐ

	Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ ¹
Ախուրյանի տարածաշրջան		
1	Ագատան	5 908
2	Ախուրիկ	1 106
3	Ախուրյան	9 208
4	Այգաբաց	745
5	Առափի	1 692
6	Արևիկ	1 809
7	Բայանդուր	713
8	Բասեն	1 280
9	Բենիամին	691
10	Գետք	603
11	Երազգավորս	1 554
12	Լեռնուտ	169
13	Կամո	1483
14	Կապս	623
15	Կառնուտ	988
16	Կարմրաքար	46
17	Կրաշեն	256
18	Հայկավան	1 263
19	Հացիկ	1 086
20	Հացիկավան (Մայիսյան կայարան)	42
21	Հովունի	624
22	Հովիտ	557
23	Ղարիբջանյան	983
24	Ախուրյան կայարան	18
25	Մայիսյան	1 651
26	Մարմաշեն	1 404
27	Մեծ Սարիար	402
28	Շիրակ	1 192
29	Ոսկեհասկ	2 041
30	Ջաջուռ	620
31	Ջաջուռավան	216
32	Ջրառատ	981
33	Վահրամաբերդ	1 227
34	Փոքրաշեն	200
35	Քեթի	1 067
Ամասիայի տարածաշրջան		
1	Ալվար	112

¹ ՀՀ մարզերի գյուղերի այս տվյալների սկզբնաղբյուրը՝ համայնքների կողմից տարեկան կտրվածքով ներկայացվող «Գյուղական բնակչության սեռատարիքային կազմը» վիճակագրական հաշվետվություններն են: Այդ սկզբնաղբյուրներով ՀՀ 954 գյուղական բնակավայրերի մշտական բնակչության թվաքանակների հանրագումարը՝ ամբողջությամբ և ըստ մարզերի, ունի որոշակի շեղում բնակչության ընթացիկ հաշվառման համանուն տվյալներից, որոնք խարսխված են Արդարադատության նախարարության Քաղաքացիական կացության ակտերի գրանցման և Ոստիկանության (ճշգրտված՝ տ/տ կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքներով) վարչական ռեգիստրների տվյալների վրա: Ընդ որում, վերջինս վերագնահատված է ՏՏԿԱՀ արդյունքներով ստացված միգրացիայի տվյալներով (շեղումը՝ 01.01.2020թ.-ի դրությամբ ՀՀ մասշտաբով՝ կազմել է +10.8%): Շեղումը հիմնականում պայմանավորված է գյուղերի միջև տվյալ տեղեկատվության գրանցման, փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգաճշտման համակարգի բացակայությամբ:

	Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ ¹
2	Արավետ	-
3	Աղվորիկ	72
4	Ամասիա	1 656
5	Արդենիս	205
6	Արեգնադեմ	429
7	Բանդիվան	221
8	Բերդաշեն	164
9	Պաղակն	100
10	Բյուրակն	634
11	Գառնատիճ	184
12	Եղնաջուր	30
13	Գտաշեն	203
14	Կամխուտ	11
15	Ջարիշատ	86
16	Երիզակ	-
17	Զորակերտ	174
18	Դարիկ	14
19	Ծաղկուտ	127
20	Լորասար	-
21	Հովտուն	155
22	Մեղրաշատ	363
23	Շաղիկ	86
24	Ողջի	357
25	Ջրաձոր	247
Աշոցքի տարածաշրջան		
1	Աշոցք	2 815
2	Արփենի	370
3	Բաշգյուղ	56
4	Բավրա	686
5	Գոգհովիտ	424
6	Զույգաղբյուր	532
7	Թավշուտ	388
8	Թորոսգյուղ	369
9	Լեռնագյուղ	23
10	Կարմրավան	234
11	Կաքավասար	128
12	Կրասար	547
13	Հարթաշեն	119
14	Հողմիկ*	422
15	Ձորաշեն	224
16	Ղազանյի	648
17	Մեծ Սեպասար	919
18	Մուսայելյան	355
19	Սալուտ	99
20	Սարագյուղ	258
21	Սարապատ	106

* Նախկինում եղել է Ամասիայի տարածաշրջանում :

	Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ ¹
22	Սիգավետ	396
23	Վարդաղբյուր	139
24	Յողամարզ	596
25	Փոքր Սարիար	261
26	Փոքր Սեպասար	215
Անիի տարածաշրջան		
1	Ադին	549
2	Անիական	371
2	Անիպենգա	353
4	Բագրավան	817
5	Նորշեն	-
6	Գուսանագյուղ	945
7	Իսահակյան	1 039
8	Բարձրաշեն	-
9	Լանջիկ	958
10	Լուսաղբյուր	707
11	Հայկաձոր	499
12	Ձիթհանքով	1 441
13	Ձորակապ	1 236
14	Շիրակավան	810
15	Զրափի	871
16	Սառնաղբյուր	3 510
17	Սարակապ	615
18	Քարաբերդ	1 124
Արթիկի տարածաշրջան		
1	Անուշավան	2 132
2	Արևշատ	1 912
3	Գեղանիստ	1 230
4	Գետափ	858
5	Լեռնակերտ	1 388
6	Լուսակերտ	651
7	Հայկասար	221
8	Հայրենյաց	750
9	Հառիճ	1 525
10	Հոռոմ	2 084
11	Հովտաշեն	353
12	Մեծ Մանթաշ	2 420
13	Մեղրաշեն	1 242
14	Նահապետավան	818
15	Նոր կյանք	1 564
16	Պեմգաշեն	3 351
17	Սարայանջ	1 294
18	Սարատակ	1 375
19	Սպանդարյան	1 588
20	Վարդաքար	663
21	Տուֆաշեն	422
22	Փանիկ	3 184
23	Փոքր Մանթաշ	3 018

**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2019թ.**

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք ¹	տղամարդիկ ¹
Բնակչությունը, մարդ	10 000	5 354	4 646
Ծնվածներ, մարդ	122	59	63
Մահացածներ, մարդ	105	52	53
Ամուսնություններ	42	X	X
Ամուսնալուծություններ	11	X	X
Մեկընթացիկ ապահովվածություններն օրհանուրը բնակավայրերում, քառ.մ	31.6	X	X
Կրթությանն ուղղված, հաճախումը կրթության, մարդ՝			
նախադպրոցական	245	113	132
հանրակրթական	1 356	643	713
երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	163	106	57
նախնական մասնագիտական (արհեստագործական)	41	13	28
միջին մասնագիտական	77	40	37
բարձրագույն մասնագիտական	153	93	60
Առողջապահությանն ուղղված՝			
հաճախել են պոլիկլինիկատարվարն թացքում (հաճախումներ իր քանակը)	40 933
Մարզիկներ, մարդ	267	47	220
Զբոսաշրջության, մարդ	3 989	1 726	2 263
նրանցից՝ գիտական հիմնարկներում	3	1	2
նրանցից՝ գիտության ոլորտում	0.3	-	0.3
գիտության թեկնածուներ	1	-	1
ուսուցիչներ	130	114	16
բժիշկներ	25
միջին բուժանձնակազմ	55
Գործազուրկներ, մարդ	767	381	386
Մոզայական ապահովությանն ուղղված			
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1 701	1 061	640
աղքատության ընդունելի անվաստ նման վաղորդական օգնություն ստացող ընտանիքներ	584	X	X
Հաճախումներ իր քանակը տարվարն թացքում			
գրադարան	17 352
թատրոն	2 489
համերգ	1 012
թանգարան	3 664
Իրավականություն			
հանցագործության դեպքեր իր քանակը, տարվարն թացքում	61	X	X
այդ թվում՝ ոչ մեծ ծանրության	27	X	X
միջին ծանրության	23	X	X
ծանր	10	X	X
առանձնապես ծանր	1	X	X

¹ Ցուցանիշները հաշվարկային են: